ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» մարտի 2021թ. № 134

ԷԼԻԶԱ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ԴԻԼԲԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՍԵՆ ԴԻԼԲԱՐՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2019 թվականի մայիսի 21-ի վկայագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 2021 թվականի մարտի 5-ի թիվ Կ-05032021-006-0084 որոշումը և Արմեն Ստյոպայի Դիլբարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Էլիզա Ասլանյանին, Արմեն Դիլբարյանին և Արսեն Դիլբարյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի փոխանցված՝ Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող 0,077 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի, դրա վրա գտնվող 253,50 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 35,0 քառակուսի մետր մակերեսով խանութի, 27,2 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի, 42,8 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի և 53,0 քառակուսի մետր մակերեսով պարսպի «քաղաք Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 4» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 67» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 9
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» մարտի 2021թ. № 138

ԱԴԵԼԱ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԸՍՏ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի առուվաճառքի 2021 թվականի մարտի 2-ի պայմանագիրը և Ադելա Աշոտի Բադալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ադելա Աշոտի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Մյասնիկյան փողոցի վրա գտնվող 0,0098 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի, դրա վրա գտնվող 45,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան և 22,8 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի «քաղաք Սպիտակ, Մյասնիկյան փողոց, թիվ 53/ա» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Մյասնիկյան փողոց, թիվ 53/1» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 9
ք.Սպիտակ